ՃՈՐՈԽԻ ԱՒԱԶԱՆԸ

Ճորոխի Աւազանը գտնուում է Հայաստանի հիւսիս-արեւմտեան կողմը, Պոնտոսի՝ Խապտիքի, Խալիբների, Վրաստանի՝ Գուրիա, Մինգրելիա, Ախալցխա, Քոցխով, Հայկականի՝ Արզահան (Գուգարք), Կարս-Վանանդի, Բասենի (վերին եւ ներքին Բասեան), Կարնոյ, Դերջանի եւ Եկեղեաց-Երզինգեանի գաւառների մէջ: Սահմաններն ոկսում են հիւս. լայնութեան 40° մինչեւ 41,50° եւ արեւել. երկարութեան 57,30 մինչեւ 60,15°: Այս երկիրը չրջապատի գաւառներից բաժանուում է բարձր լեռնաշղթաներով, սրակող եւ սրակատար լեռներով, խոր-խոր անդունդներով, որոնք երկրի շուրջը անառիկ պատուարներ են կազմում, հազարդակցութիւնը եւ յարաբերութիւնը անջատում: Այս լեռնաշղթաները գրեթէ համանման կերպով պարսպած են երկիրը եւ իրար միացած. իրենց շարունակութիւնը երկրի ներքին գաւառներն էլ իրարից բաժանած է: Հայաստանի բարձրաւանդակի այս հիւսիս-արեւմտեան ծայրի լեռները կենդրանական Ասիայի Կուէն-Լուն